«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 մայիսի 2014 թվականի

«Ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների կազմակերպումը Գյումրու մասնաճյուղում» հարցի մասին

Լսելով և քննարկելով **«Ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների կազմակերպումը Գյումրու մասնաճյուղում»** հարցը (զեկուցող՝ Գյումրու մասնաճյուղի տնօրեն, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ս.Ա.Դավոյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է. հաշվետու ժամանակաշրջանում զգալի կազմակերպական աշխատանքներ են կատարվել ուսումնական գործընթացի կատարելագործման, կրեդիտային համակարգի արմատավորման և զարգացման ուղղությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում մասնաճյուղի գիտական խորհրդի նիստերում լսվել և քննարկվել են ուսումնական, գիտական, դաստիարակչական, կարգապահական և կազմակերպական բազմաբնույթ հարցեր: Առաջ են քաշվել կրեդիտային համակարգի կիրառման գործնական արդյունավետության բարձրացման հիմնահարցեր:

Տնօրինությունը, ամբիոնները և կառուցվածքային ստորաբաժանումները մշտապես հսկողություն են սահմանել քննաշրջանների ողջ ընթացքում:

Դրական տեղաշարժեր են կատարվել ուսումնական գործընթացի կազմակերպման ասպարեզում: Ամբիոններում հաճախակի կատարվել են քննարկումներ ուսման որակի բարձրացման և ուսանողների հետ կատարվող ուսումնադաստիարակչական աշխատանքների ուղղությամբ:

Մասնաճյուղում դասավանդում է 44 դասախոս, որից՝ 5 գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, 12 գիտությունների թեկնածու (որից 9-ը՝ դոցենտ):

Հաշվետու ժամանակաշրջանում մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմը հրատարակել է 67 գիտական հոդված:

Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի դասախոսներ Գ.Սալնազարյանի, Ա.Պողոսյանի, Ա.Առաքելյանի և բնագիտական ամբիոնի դասախոս Մ.Գյոդակյանի թեկնածությունները ներկայացվել են դոցենտի գիտական կոչումներ շնորհելու համար: Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի դասախոս Ա.Գարեգինյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

ՀՀ, Երևան 0025, Նալբանդյան 128, Հեռ.՝ +37410 521720
Ֆաքս՝ +37410 528864, էլ-փոստ՝ info@asue.am, www.asue.am

Ելնելով վերոնշյալից՝ գիտական խորհուրդը **որոշում է.**

1. **Մասնաճյուղի 2013-2014 ուսումնական տարվա ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման մասին հաշվետվությունն ընդունել ի գիտություն և կատարած աշխատանքը գնահատել բավարար:**

2. **Հանձնարարել ամբիոններին՝**
   1) դասախոսությունները, սեմինար և գործնական պարապմունքներն անցկացնել ժամանակակից տեխնիկական միջոցներով և արդյունավետ մեթոդներով,
   2) փորձառության վայրերը հնարավորության սահմաններում համապատասխանեցնել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմատիկային,
   3) ուշադրության կենտրոնում պահել ամփոփիչ ատեստավորման քննությունների նախապատրաստման, անցկացման և ավարտական աշխատանքների ու մագիստրոսական թեզերի կատարման և պաշտպանության գործընթացը,
   4) լուրջ ուշադրություն դարձնել ամբիոնների՝ որակյալ մասնագետներով համալրմանը,
   5) խիստ պատասխանատվությամբ առաջնորդվել ինչպես դասաբաշխումներն իրականացնելիս, այնպես էլ դասախոսական կադրեր ընտրելիս,
   6) բացառել հաճախակի դասաձախողումներ թույլ տված դասախոսների ներգրավումը դասավանդման գործընթացում,
   7) ակտիվություն ցուցաբերել կրթական որակի բարեփոխման գործընթացում և համապատասխան առաջարկություններ ներկայացնել մայր բուհ:

3. **Հանձնարարել մասնաճյուղի տնօրենին՝**
   1) մասնաճյուղի գիտական խորհրդի նիստերում պարբերաբար քննարկել կրեդիտային համակարգի կիրառման և կատարելագործման հետ կապված հիմնահարցերը և առաջարկությունները ներկայացնել մայր բուհ,

2) ակտիվացնել և ավելի նպատակային դարձնել գիտահետազոտական աշխատանքների ոլորտը և պարբերաբար հաշվետվություններ ներկայացնել ՀՊՏՀ,
3) ակտիվացնել համագործակցությունը մայր բուհի համապատասխան մասնագիտական ամբիոնների հետ,
4) հնարավորինս նվազագույնի հասցնել ուսման վճարի գծով պարտավորությունները:

4. ՀՊՏՀ ռեկտորատին՝

1) ՀՊՏՀ-ի մասնագիտական ամբիոններին՝ տրամադրել ուսումնա-մեթոդական գրականություն և խորհրդատվություն մասնաճյուղի դասախոսներին,
2) հրատարակչական պլաններում նախատեսել ուսումնագիտական հրատարակումներ մասնաճյուղի դասախոսների համար,
3) աջակցել մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմի սերնդա-փոխության գործընթացին՝ ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի միջոցով պատրաստելով համապատասխան կադրեր:

5. Սույն որոշումը քննարկել մասնաճյուղի գիտական խորհրդի և ամբիոնների նիստերում ու ձեռնարկել գործուն միջոցառումներ՝ նշված հանձնարարականները [redacted] համար:

6. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել պրոռեկտորներ Պ.Ա.Քալանթարյանին, Մ.Ն.Հարությունյանին և Գ.Ի.Վարդանյանին:

Գիտական խորհրդի նախագահ **Կ. Լ. Աթոյան**

27.05.2014 թ.

ք. Երևան